ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 646 - Ա

22 նոյեմբերի 2021 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐԱԲԱԿ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԹԱՌԱՄ ԽՈՆԴԿԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՎԵՍԿԻ ԵՐԻՑՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 13-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 69-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման 1-ին կետի պահանջներն ու Անթառամ Խոնդկարյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անթառամ Խոնդկարյանին տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա երկարացված արձակուրդը՝ 2021 թվականի նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 27-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր:

2. «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անթառամ Խոնդկարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի լիազորությունների և

պարտականությունների իրականացումը վերապահել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցիչ Վեսկի Երիցյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

22.11.2021

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ք.Գավառ